

ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԺԸ  
2019

ԵՐԵՎԱՆ

2019

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հանդեսի գլխավոր խմբագիր՝  
Սուրեն Աբրահամյան

Խմբագրական խորհրդի անդամներ՝

բ.գ.դ. Ջավեն Ավետիսյան  
բ.գ.դ. Ալբերտ Մուշեղյան  
բ.գ.դ. Աելիտա Դուլսանյան  
բ.գ.դ. Վարդան Դերիկյան  
բ.գ.դ. Ավիկ Իսահակյան  
Էդվարդ Միլիտոնյան  
բ.գ.դ. Վազգեն Գաբրիելյան  
բ.գ.դ. Հենրիկ Էդոյան

ISSN

© ԳԱԱ Գրականության ինստիտուտ, 2018

© «Արմավ» հրատարակչություն, 2018

## ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՂՃԻ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ ԼԻԼԻԱՆ ՀԵԼՄԱՆԻ ՊԻԵՄՆԵՐՈՒՄ\*

Լիլիան Հելմանը դրամատուրգիայի աշխարհի մուտք գործեց իր յուրահատուկ թեմաներով և մոտեցմամբ: Նրա պիեսներում այնպիսի հարցադրումներ են արվում, ինչպիսիք են անհատի իրավունքը, սեփական կյանքի տնօրինումը («Երեխաների ժամը») և մի ամբողջ դասակարգի իրավունքներն ու հասարակության դեմ ընդվզումները («Գալիք օրեր»):

Լիլիան Հելմանի ամենահաջողված և քննադատների կողմից մեծապես ընդունելություն գտած պիեսը «Փոքրիկ աղվեսները» ստեղծագործությունն է: Պիեսը ներկայացվել է 1959 թ. փետրվարի 15-ին Բրոդվեյում և 410 անգամ բեմադրվել այնտեղ: Հետաքրքրական է, որ պիեսի անվանումը վերցված է «Աստվածաշնչի» Սողոմոնի երգի երկրորդ գլխի 15-րդ երգից, որտեղ գրված է «Վերցրե՛ք մեզ, աղվեսներ, փոքրիկ աղվեսներ, դուք որ փչացնում եք գինիները, քանի որ մեր գինիները նորագույն ողկույզներից են»<sup>1</sup>: Այսպես կոչվող մի փոքրիկ քաղաքի պատմություն է սա, որտեղ պայքար է գնում ընտանեկան բիզնեսը կառավարելու շուրջ:

Կարծիք կա, որ պիեսի հիմքում ընկած է Լիլիան Հելմանի ընտանեկան պատմությունը: Նրա մայրը հրեական ընտանիքից էր, որտեղ կար ընդգծված վերաբերմունք բիզնեսի հանդեպ: Ավելին, տատիկը՝ Սոֆի Մարքսը, սերում էր հանրահայտ և հարուստ բանկիրների ընտանիքից և երբևէ բաց չէր թողնում Լիլիանի հորը ծաղրելու և նախատելու հնարավորությունը՝ ոչ հմուտ բիզնեսմեն լինելու հարցում<sup>2</sup>: Ընտանեկան այս իրավիճակը դառնում է Հելմանի համար ոգեշնչման աղբ-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.02.2019:

1 Hellman, L., The Little Foxes, New York, 1961, P. 52.

2 Bigsby, C.W.E., William, C., A Critical Introduction to Twentieth-Century American Drama (history and criticism), Vol. 3, Cambridge University Press, 1990, P. 431-432.

յուր, իսկ գրող և թատերաքննադատ Դորթի Փարկերը հետագայում առաջարկում է պիեսի անվանումը:

Պիեսը առանձնահատուկ է նաև նրանով, որ դարասկզբի դրամատուրգիայում բարձրացվում են ֆեմինիստական գաղափարները, որտեղ առաջին անգամ պատկերվում է կնոջ ձակատագիրն ու նրա ընտրության իրավունքը: Չի կարելի ասել, որ նման հարցեր չէին քննարկվում նշյալ ժամանակահատվածում, սակայն Հելմանի հարցադրումը ոչ միայն սոցիալական է, այլև՝ հոգեբանական:

Հելմանն իր պիեսում առաջ է քաշում հերոսի խղճի հարցը. արդյոք ազատությունը, որը ձեռք է բերվում ընտանեկան բիզնեսը կառավարելու միջոցով, ապահով հանգրվա՞ն է, ինչպես կարծում է գլխավոր հերոսուհի Ռեզինան: Հերոսուհին համոզված է, որ պետք է լսել խղճի ձայնը և չզոհաբերել իր ընտանիքն այդ ազատության համար:

Առհասարակ, պիեսը ցույց է տալիս բարեկեցության և ազատության համար պայքարող կնոջը՝ Ռեզինա Հուբարդ Գիդենսին, որն ի վերջո հստակորեն գիտակցում է, որ թեև հասարակության մեջ ընդունված է ընտանեկան ժառանգությունը հորից որդուն փոխանցելը, սակայն իրենց ընտանիքում անհրաժեշտ են բարեփոխումներ: Նրա երկու եղբայրները՝ Օսկարն ու Բենջամինը, քայքայել էին ընտանեկան հարստությունը՝ յուրաքանչյուրը տիրանալով իր հատվածին: Նրանք այլևս չէին մտահոգվում ընտանեկան ընդհանուր բարեկեցության մասին, նրանց խղճի ձայնն այստեղ լուել էր՝ անհոգ ապրելու հեռանկարի համոզմունքով: Ռեզինայի միակ հույսը նրա զգույշ, ամաչկոտ և կողմնակալ ամուսինն էր: Նա հրաշալիորեն հասկանում էր, որ ամուսինը չէր կարող դառնալ բիզնեսմեն, և գլխավոր հերոսուհին ամուսնուն պարզապես դարձնում է իր մանիպուլյացիաների գործիքը<sup>3</sup>:

Հելմանը հրաշալի հակադրություն է ստեղծում այս երկուսի միջոցով. տղամարդկային գծերով օժտված կինը՝ Ռեզինան, և մյուս կողմից՝ փափկասուն ու վախվորած ամուսինը՝ Հորացին, որը դառնում է կնոջ եսասիրության ու ազահության, ֆինանսական բարեկեցության գրավականը: Տեղի է ունենում ընտանեկան դերերի բացահայտ կերպարանափոխություն, որտեղ հերոսների ներաշխարհը արձագանքում է այդ կերպարանափոխությանը:

3 Bryer, J., R., Conversations with Lillian Hellman, University Press of Mississippi, 1986, P.128.

Դարասկզբի ամերիկյան սոցիալական վեպի թեմատիկան ամբողջովին դրված է այս հարթության վրա, սակայն այդ վեպերում (Թ.Դրայզեր, Ս. Լյուիս, Ջ. Սթայնբեք) հերոսը կորցնում է իր անհատական մոտեցումը, ասես ձուլվում է հասարակական կառույցին: Հելմանի մոտ հերոսուհին մինչև վերջ գնում է իր ձանապարհով, որը սակայն արդարացված է, թե ոչ, մնում է հանդիսատեսի դատին: Ամբողջ պիեսը դրամական հարաբերությունների պարզաբանման լայնածավալ տեսարան է, որտեղ յուրաքանչյուր դերակատար սեղանին է դնում իր հոգին ու խիղճը:

Հեղինակը հոգեբանական բարդ լուծումների առջև է կանգնեցնում իր հերոսներին: Այսպես. Օսկարը, ամուսնանալով իր հարբեցող կնոջ հետ, կարողանում է տնօրինել միայն ընտանեկան բիզնեսի բամբակի պլանտացիաները: Նրան չի հաջողվում պահպանել ամբողջը և կանգնում է այլընտրանքի առջև: Լիլիան Հելմանը հրաշալիորեն ցույց է տալիս հերոսի բարոյական անկման ողջ ողբերգությունը: Գումար ձեռք բերելու ակնկալիքով Օսկարն առաջարկում է իր տղայի և քրոջ աղջկա՝ Ալեքսանդրայի ամուսնությունը: Առաջարկը մերժում են Ռեզինայի ամուսինն ու դուստրը:

Հելմանի պիեսի մյուս գերազանց հնարքը՝ նրա հերոսների կեցվածքի և դրանից բխող որոշումների բացահայտումն է, հերոսների բարոյական նկարագրի արտահայտությունը: Ռեզինայի ամուսինը, որը պիեսի սկզբում ներկայանում էր ձայնազուրկ մեկը, որն ընդամենը գործիք էր կնոջ ձեռքին, նրա բնույթը դրվում է այլ հարթության վրա: Այսուհետ նա այն հերոսն է, ով հաղթահարել է խղճի հետ գործարքը:

Հելմանն այսքանով չի ավարտում այս հոգեբանական դրաման: Նա ստիպում է իր հերոսներին՝ ամբողջովին մերկացնել իրենց հոգիները և խտացնում է պիեսի գույները: Ռեզինան ծնշում գործադրելով եղբոր տղայի վրա, դրդում է նրան գողության: Քայլ առ քայլ պիեսի հերոսները խախտում են բարոյականության բոլոր նորմերը: Ավելին, նրանք չեն էլ զղջում իրենց արարքների համար: Հելմանի գլխավոր հերոսուհին, որն ասես սատանային վաճառված լինի, շարունակում է իր անբարոյականությունները: Պիեսում տեսնում ենք, թե ինչպես է քանդվում մի ամբողջ ընտանիք, իսկ ամենասարսափելին այն է, որ այն կարող էր ամուր և բարեկեցիկ լինել:

Հելմանի հերոսների խնդիրը տակավին հասարակական է: Այն «ես»-ի բարոյական խնդիրն է: Հելմանն իր հերոսուհուն տալիս է ավելի լավը լինելու հնարավորություն, սակայն նա դրանից չի օգտվում: Երբ Ռեզինայի ամուսինը բացահայտում է գողության փաստը, նա ամբողջովին հեռացնում է կնոջը գործերից: Ռեզինան կորցնում է ազատ և համարձակ լինելու միակ հնարավորությունը: Փլուզվում է մի ամբողջ՝ պատրանքային աշխարհ, որտեղից վաղուց անհետացել էր խիղճը: Հելմանը գազաթնակետին է հասցում Ռեզինայի կերպարը, որը ոչնչով չի օգնում ամուսնուն, ով գրույցի ժամանակ սրտի կաթված է ստանում: Նա մահանում է մի քանի ժամում, իսկ նրա մտադրությունը, այն է՝ փոխել կտակը աղջկա՝ Ալեքսանդրայի անունով և պահանջել Լեոյից վերադարձնել գողացված պարտատոմսերը, հօդս են ցնդում:

Հելմանն այստեղ էլ է հերոսուհուն ընտրելու հնարավորություն տալիս և ևս մեկ անգամ համոզում հանդիսատեսին, որ բարոյականության հետ գործարքը ձախողված է:

Ազատվելով ամուսնուց, Ռեզինան անցնում է խանգարող մյուս հանգամանքներին: Նա երբևէ չի տեսել մի բան, ինչը կարող էր հիշեցնել սեփական արյան մասին: Ներդրված գումարի չափով (75 հազար), նա պահանջում է եղբորից՝ Օսկարից, 75% կառավարման իրավունք: Հելմանը հատուկ է նշում գումարի չափը և պահանջված իրավունքի տոկոսադրույքը: Ասես հեղինակը ասում է. «Տեսեք, ինչպիսի ազնվություն է, որքան դրել եմ, այնքան էլ ուզում եմ»: Նշված դրվագի մեջ անգերազանցելի սարկազմ կա, և Հելմանը պատահական չի անում դա: Պիեսի ավարտը նման է հեքիաթի՝ չարի պատժման սկզբունքի վրա խարսխված<sup>4</sup>:

Գլխավոր հերոսուհին հատուցում է իր բոլոր եսասիրական և «ազատ» քայլերի համար: Նա դատապարտվում է օտարման և միայնության: Ռեզինայի դուստրը հեռանում է, ասելով, որ չի խնամի մեկին, ով «հող է ուտում», ամուսինը մահացել է, եղբայրը լքում է նրան: Ռեզինան մնում է իր ձոխ բարեկեցության և կեղտոտ խղճի հետ միայնակ: Սակայն Հելմանը պիեսի վերջում ակնարկում է, որ կտակի մեջ Ռեզինայի անունն ընդհանրապես չէր նշված: Հնարավոր է, որ այսպիսի

4 Griffin, A.,Thorsten, G.,Understanding Lillian Hellman, University of South Carolina press, 1999, P.105.

կանխակալ վերաբերմունքն է ծնել գլխավոր հերոսուհու հոգեբանական հրեշին, հնարավոր է, որ եթե հենց սկզբից հավասար լինեին նրա և եղբայրների մրցակցային պայմանները, նա այդպես չհարանար:

Մյուս կողմից, Հելմանը մեկ ուրիշ հարց է բարձրացնում. Արդյոք հերոսուհին կարող է հաղթել ինքն իրեն: Հելմանի հերոսուհին չունի պատրաստի դեղատոմս. նա պետք է ինքնուրույն կողմնորոշվի ազատ կնոջ ձայնի և բարոյական նորմերի միջև: Հելմանն իր հերոսուհու համար ընտրում է ազատության և անկախության համար մարդկային հարաբերությունները:

Այսպիսով, Հելմանի այս պիեսը կարող է համարվել բավական արդիական: Դարասկզբին ծառայած խնդիրները իրենց լուծումը չեն ստացել մինչև օրս:

Լ. Հելմանն իր գրական համարձակությունը ցույց է տալիս մեկ այլ պիեսում, որը գրվել է «Փոքրիկ աղվեսներից» շատ առաջ: Այդ պիեսը «Երեխաների ժամն» է, որը բեմադրվել է 1934-ին Մաքսին Էլիոթ թատրոնում և որի բեմադրիչն էր հանրահայտ Հերման Ծումլինը: Երկու տարի անց պիեսը բեմադրվում է Փարիզում և Լոնդոնի Գեյթ թատրոնի ստուդիայում:

Ինչպես Լիլիան Հելմանի ամենահաջողված պիեսում, այնպես էլ «Երեխաների ժամը» 3 գործողությամբ դրամայում դիտարկվում են ազատության և սեփական խղճի թեմաները, որտեղ մեծահասակների աշխարհ ներխուժում է երեխայի քմահաճ իրականությունը, որտեղ տեսնում ենք, թե ինչպես են քանդվում կայացած կյանքի հիմքերը: Զայրացած և վրեժխնդիր աղջնակին՝ Մերի Թիլֆորդին թվում է, թե աննշան սուտը դառնում է երկու կանանց կարիերայի, հարաբերությունների և կյանքի անդառնալի կորուստը: Թեև այստեղ էլ Հելմանը նախադրյալ է ստեղծում իր հերոսուհու՝ Մերիի համար, որով փորձում է մեղմացնել վերջինիս սարսափելի արարքը:

Դիպվածը սկսվում է նրանով, որ Մերի Թիլֆորդը, ով սովորում է աղջիկների գիշերօթիկ դպրոցում, ամեն գնով ցանկանում է փախչել այնտեղից: Նրա ազատության պահանջը բախվում է դպրոցի բարքերի հետ՝ ընդգծելով վերջինիս ցանկության անհնարինությունը: Աղջիկը իրեն թույլ է տալիս խղճին դեմ գնալ և փախչելով դպրոցից՝ հորինում է մի զարհուրելի սուտ՝ պատմելով այն իր տատիկին: Նրա սուտն անցնում է բարոյական բոլոր նորմերը:

Բոլորը տեղեկանում են, որ երկու ղեկավար պաշտոնյա կանայք՝ Քյարեն Ռայթը և Մարթա Դոբին լեսբուհիներ են:

Լիլիան Հելմանն այստեղ ևս պատասխանատվությունը թողնում է իր հերոսուհու՝ Մերիի վրա: Աղջիկը կարող էր կանգ առնել յուրաքանչյուր պահի, սակայն նրա բարոյականության ընկալման չափանիշները խախտված են: Քաջ գիտակցելով, թե ինչ կարող է լինել իր կողմից անհիմն մեղադրված կանանց հետ, նա խորամանկորեն ներգրավում է նաև իր դպրոցական ընկերուհիներին:

Աղջնակի սուտը մղձավանջ է դառնում Քյարենի և Մարթայի համար: Նրանք դիմում են դատարան՝ ակնկալելով արդարացի հանգուցալուծում, սակայն այստեղ էլ ոչինչ չի ստացվում: Միայն դպրոցական բժիշկ Ջո Քարդինը հավատարիմ է մնում իր կարծիքին՝ բացահայտելով Մերիի խաբեությունը և մտադրվում պայքարել մինչև վերջ: Սակայն Քյարենը ելք չի տեսնում այս իրավիճակից դուրս գալու համար: Նա հոգու անսահման տոկունություն է ցուցաբերում Մարթային նման վիճակից դուրս բերելու համար, կարծելով, որ նրա հետ զրուցելը կօգնի վերջինիս: Սակայն Մարթան այլ ձանապարհ է ընտրում<sup>5</sup>: Օտարված մարդու այլընտրանքը կարող է լինել միայն ինքնասպանությունը: Եվ Մարթան անցնում է չափազանց անհավատների կամ չափազանց հուսալքվածների սահմանագիծը<sup>6</sup>:

Լիլիան Հելմանը իր պիեսում դիտարկում է հերոսների հոգեբանական վիճակը, որի արմատները գնում են դեպի հասարակական նախապաշարմունքը: Անհատի ազատության և կենսասիրության ցանկությունները բախվում են հասարակական նորմերի հետ: Եթե հասարակությունը այսպես դաժան չլիներ նման հարցերի հանդեպ, հնարավոր է չխաթարվեր Քյարենի և Մարթայի կյանքը:

Լիլիան Հելմանն իր հիշողություններում պատմում է, թե ինչպես Շումլինը համաձայնեց բեմադրել այս պիեսը. «1934-ի մայիսին Հելմանը խնդրում է Շումլինին կարդալ իր խմբագրած պիեսի 6-րդ օրինակը: Երբ Շումլինը կարդում է առաջին գործողությունը, նա բոլորովին չի հավանում: Երկրորդ գործողությունից հետո ասում է. «Հուսով

5 Hellman, L., The Children's Hour, Kessinger Publishing, Montana, 2005, P.83.

6 Griffin, A., Thorsten, G., Understanding Lillian Hellman, University of South Carolina press, 1999, P.139.

եմ, այն կհետաքրքրի», երրորդից հետո նա բացականչում է. «Ես կբեմադրեմ այն»<sup>7</sup>:

Այսպիսով, Լիլիան Հելմանի պիեսներն այնպիսի արդիական հարցադրումներ են ներկայացնում, որ նրանցից շատերը ոչ միայն բեմադրվում, այլև կինոսցենար են դառնում ժամանակի ընթացքում:

Լիլիան Հելմանը դարասկզբի դրամատուրգիայում իր ուրույն տեղն է զբաղեցրել նաև նրանով, որ կարողացել է իր հերոսների միջոցով վեր հանել ժամակաշրջանի ոգին՝ հմտորեն համեմատելով այն անձի ներաշխարհի հետ:

**Բանալի բառեր.** - Լիլիան Հելման, ամերիկացի դրամատուրգ, պիես, «Փոքրիկ աղվեսները», «Երեխաների ժամը», սոցիալական ու հոգեբանական հարցադրումներ:

7 Bigsby, C.W.E., William, C., A Critical Introduction to Twentieth-Century American Drama (history and criticism), Vol. 3, Cambridge University Press, 1990, P. 426.

**Лусине Айтян**

**Вопросы свободы и совести в пьесах Лиллиан Хеллман**

**Резюме**

Американский драматург Лиллиан Хеллман в своих пьесах поднимает как социальные, так и психологические вопросы, такие как проблемы внутреннего мира личности, мотивы ответственности, совести и свободы, отчуждения и одиночества, нравственные восприятия и феминистские идеи, право выбора личности, вызова обществу и т. д.

Вышеупомянутые вопросы и идеи нашли место в пьесах Л. Хеллман "Лисички" и "Детский час".

**Ключевые слова:** Лиллиана Хеллман, американский драматург, спектакль "Маленькие лисички", "Детский час", социальные и психологические вопросы

**Lusine Haytyan**

**The problems of liberty and conscience in Lillian Hellman's plays**

**Summery**

American playwright Lillian Hellmann reveals in her plays both social and psychological problems, which are focused on the inner life of the individual. Such themes are connected with the sense of duty, questions of freedom and conscience, motifs of alienation and loneliness, as well as, moral perception and feminist ideas. Her plays rises also the questions of individual choice and the rebell against the society. All above mentioned topics and quests one can come across in Lillian Hellman's plays such as "The little foxes" and "The children's hour".

**Keywords:** Lillian Hellman, American playwright, play, "Little Foxes", "Child's Hour", social and psychological questions

# ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

### ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Պ. Պոռոշյանի «Հացի խնդիր» վեպը որպես բանահյուսական ժանրերի շտեմարան ..... 3

### ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ավ. Իսահակյանի գրառումները «Ուստա Կարո» վեպի մասին ..... 13

### ԼԻԼԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ

Չ. Խալափյանի «Եվ վերադարձնելով ձեր դիմանկարը» վեպի նորովի արժեվորումը ..... 19

### ԳՈՂԱՐ ՍԱՀԱԿՅԱՆ

Օտարականի կերպարը Հակոբ Կարապենցի պատմվածքներում ..... 32

### ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ

Կրակի լեզվով պատմվող առասպել ..... 40

## ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒՏՈՒՐԻՉՄ

### ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Հայկական ֆուտուրիզմի վեպը ..... 55

# ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

### ՍՈՒՐԵՆ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

Հակոբ Մովսես. «Գիրքը գրված է, պարտքը՝ կատարված» ..... 65

## ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՔ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԵԼԵՆԱ ԷԹԱՐՅԱՆ

Մետագրականությունը և ռոմանտիկական հեգնանքը ..... 114

### ԼՈՒՍԻՆԵ ՄՈՒՍԱԽԱՆՅԱՆ

Շառլ Դը Կոստերի «Ֆլամանդական լեզենդներ» պատումաշարի ներքին տարածական շերտերը ..... 129

### ՎԱՀԵ ԱՐՄԵՆՅԱՆ

Ջ. Ստայնբեքի «Փաղանգի տեսության» արտացոլումը նրա «Ցասման ողկույզները» վեպում ..... 137

### ԷԼԼԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Տարածության պատկերման առանձնահատկությունները Դոն Դելիլոյի «Մառ երկրորդ» վեպում ..... 149

### ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅԹՅԱՆ

Ազատության և խղճի հարցադրումները Լիլիան Հելմանի պիեսներում ..... 154



**ՍՈՆՅԱ ԱՊՐԵՍՈՎԱ**

Նոնսելեկցիայի սկզբունքը և պոստմոդեռնիստական զգայունությունը Դ.Դելիլոյի «Ընկնող մարդը» վեպում ..... 165

**ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ**

**ՍԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Հանուն այրված գրադարանի և կորուսյալ գիտելիքի ..... 173

**ՇՈՒՇԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ**

Ներվայան երազագրությունը Ֆիլիպ Գարրելի ֆիլմերում ..... 189

**ՏԱԹԵՎ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

Մահվան պաշտամունքի գաղափարական հիմքերը Գ. Թրակլի պոեզիայիում ..... 202

**ՀԱՂՈՐԴՈՒՄ**

**ՀԱՄՈ ԿԱՐԵՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

**ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆԻ ԵՐԱՆՈՍՅԱՆ**

Խորհրդահայ երգիծանքի նվիրյալը. Էդուարդ Խոճիկ ..... 215

**ՄԻՔԱՅԵԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Կրիչների դերը հայ հուշագրության տիպաբանության մեջ ..... 226

Աэлита Долуханян  
РОМАН «ИЗ-ЗА ХЛЕБА» П. ПРОШЯНА, КАК КЛАДЕЗЬ  
ФОЛЬКЛОРНОГО ЖАНРА

Անաիտ Կարտանյան  
Записи Ав.Исаакяна о романе "Уста Каро"

Լիլիտ Կազարյան  
Новая переоценка романа З. Халапяна «И возвращая ваш портрет»

Գ. ՏԱԿՅԱՆ  
Образ незнакомца в рассказах Акопа Карапенца.

Լիլիտ Տեյրանյան  
Легенда рассказанная языком огня

Գրաչյա Տարիբեկյան  
Роман армянского футуризма

к. ф. н. Տուրեն Աբրահամյան  
АкопМовсес: §Книга написана, долгиогашен:

ԵԼԵՆԱ ԷՏԱՐՅԱՆ  
Металитература и романтическая ирония

ԼՍՍԻՆԵ ՄՍՏԱԽԱՆՅԱՆ ԵԳՍՅԱՆ  
ВНУТРЕННИЕ ПРОСТРАНСТВЕННЫЕ ПЛАСТЫ В СБОРНИКЕ  
ШАРЛЯ ДЕ КОСТЕРА §ФЛАМАНДСКИЕ ЛЕГЕНДЫ:

Վառս Բրեսնյան  
Рефлексия "теории фаланги" Джона Стейнбека в его романе  
"Гроздья Гнева"

ԷԼԼԱ ԱՏԱՐՅԱՆ  
ОСОБЕННОСТИ ОТОБРАЖЕНИЯ ПРОСТРАНСТВА В РОМАНЕ  
ДОН ДЕЛИЛЛО "МАО П"

Լուսինե Այգյան  
Вопросы свободы и совести в пьесах Лириан Хеллман

**СОНЯ АПРЕСОВА**

Принцип нонселекции и постмодернистская чувствительность в романе  
Д.Делилло "Падающий"

**Сатеник Аветисян**

Ради сгоревшей Библиотеки и утерянного знания

**Шушаник Тамразян**

Описание снов Нервала в фильмах Филиппа Гарреля

**Татев Овсепян**

Идеологические основы культа смерти в поэзия Г. Тракля

**Амо Каренович Сукнасян**

Нарине Степановна Ераносян

Преданный приверженец советской армянской сатиры: Эдуард  
Ходжик

**МИКАЕЛ АЙРАПЕТЯН**

Роль носителей в типологии армянской мемуаристики

**Aelita Dolukhanyan**

THE NOVEL THE MATTER OF DAILY BREAD BY PERCH PROSHIAN  
AS A TREASURY OF THE FOLKLORE GENRE

**Anahit Vartanyan**

Av. Isahakyan's records about the novel "UstaKaro"

**Lilit Ghazaryan**

The newly appraisal of Z. Khalapyan's novel "And returning your por-  
trait"

**G. SAAKYAN**

The character of a stranger in the stories of Hakob Karapents.

**Lilit Seyranyan**

A legend told in the language of fire

**Hrachya Saribekyan**

Armenian Futurist Novel

**PhD, Suren Abrahamyan**

Jacob Moses: "The Book Is Written, the Debt Is Made"

**YELENA ETARYAN**

Meta-Literature and Romantic Irony

**LUSINE MUSAKHANYAN YSULS**

INTERIOR SPACE LAYERS IN "FLEMISH LEGENDS"  
BY CHARLES DE COSTER

**Vahe Arsenyan**

"Reflecton of John Steinbeck's "Phalanx theory" in his novel  
"Grapes of Wrath"

ELLA ASATRYAN  
THE PECULIARITIES OF SPACE PICTURING IN THE NOVEL "MAO II"  
BY DON DELILLO

Lusine Haytjan  
The problems of liberty and conscience in Lillian Hellman's plays

SONYA APRESOVA  
The principle of nonselection and the Postmodern sensibility in the  
novel "Falling Man" by D.DeLillo

Satenik Avetisyan  
For the sake of burnt Library and lost knowledge

Shushanik Tamrazyan  
Nerval dream scrap in Philippe Garrel's films

Tatev Hovsepyan  
The ideological basis of the cult of death in the poetry of G. Trakl

Hamo K. Sukiasyan  
Narine S. Yerosyan  
Devotee of the soviet armenian humor. Eduard Khochik

MIAKYEL HAYRAPETYAN  
Role of bearers in the typology of Armenian memoirs

ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

ԺԸ  
2019

*Համարի թողարկման պատասխանատու՝ Սուրեն Աբրահամյան*

Հրատ. խմբագիր՝ Արմեն Ավանեսյան  
Սրբագրիչ՝ Արմենակ Ղազինյան

Լրատվական գործունեություն իրականացնող՝ Մ. Աբեղյանի անվան  
գրականության իրնստիտուտ ոչ պետական առևտրային  
կազմակերպություն 03.03.1997  
(գրանցման 286.0120, վկայական F 003222)  
Հասցե՝ Գր. Լուսավորչի 15  
Հեռ. և հեռախոս՝ 56.32.54, e-mail՝ litinst.@sci.am, 055-62,44,77  
Էլ. հասցե՝ litinst.@sci.am

Ստորագրված է տպագրության 01.04.2019:  
Տպաքանակ՝ 300: Ծավալը՝ 15.25 տպ.մամուլ:  
Գինը՝ պայմանագրային